

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/1

22 մարտի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 26.02.2013թ-ի նիստում քննության է առնվել «Հարավէներգովերանորոգում հատուկ մասնագիտացված արտադրական ձեռնարկություն» ՍՊԸ-ի 06.02.2013թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 07.08.2012թ. հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արձանագրության դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ուսումնասիրության արձանագրությունը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 17.07.2012թ. թիվ 2208580 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Հարավէներգովերանորոգում հատուկ մասնագիտացված արտադրական ձեռնարկություն» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության, օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման ուսումնասիրություն: Արդյունքում 07.08.2012թ-ին կազմվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արձանագրությունը (այսուհետ նաև ուսումնասիրության արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«Հարավէներգովերանորոգում հատուկ մասնագիտացված արտադրական ձեռնարկություն» ՍՊԸ-ի անձնական հաշվի քարտում սոցիալական վճարների գծով առկա է 142700 դրամ գերավճար: Ուսումնասիրության ընթացքում ընկերության կողմից սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթեր չներկայացվեցին, ուստի հաշվանցման (վերադարձման) ենթակա գումարներ չառաջացան:

«Հարավէներգովերանորոգում հատուկ մասնագիտացված արտադրական ձեռնարկություն» ՍՊԸ վարչական բողոքում մասնավորապես նշված է.

Ընկերությունը 2012թ.-ի հուլիսի 10-ին գրավոր կարգով դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին, խնդրելով իրականացնել համապատասխան ուսումնասիրություն և տալ եզրակացություն գերավճարի գումարների վերադարձման հետագա գործընթացն իրականացնելու համար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ-ի պետի 17.07.2012թ-ի թիվ 2208580 հանձնարարագրի համաձայն տեսչության աշխատակիցների կողմից ընկերությունում կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի ուսումնասիրություն: Արդյունքում 07.08.2012թ-ին կազմվել է ուսումնասիրության արձանագրություն (վարչական ակտ):

Գտնում ենք, որ հարկային տեսչության աշխատակիցների 07.08.2012թ. ուսումնասիրության արձանագրությունում նշված այն փաստը, որ «Ընկերության կողմից սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթեր չներկայացվեցին», անհիմն է, քանի որ թե սկզբնական 10.07.2012թ.-ի դիմումին կից, և թե հետագայում 06.08.2012թ.-ի դիմումով, ստուգող տեսուչների տրամադրության տակ եղել են այն սպառիչ տեղեկությունները, որ ընկերությունը դեռ «1993-1995թ.թ. ունենալով շահութահարկի արտոնություն, հաշվարկել և բյուջե է փոխանցել 19.549.400 դրամ գումար»:

Հիշյալ փաստը հաստատվում է ՀՀ ԿԱ ՀՊԾ եկամուտների հաշվառման, պլանավորման և վերլուծության վարչության կողմից 2003թ.-ի սեպտեմբերի 30-ին ընկերությունում

կատարած <Որևէ հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների (գերավճարների) հաշվանցման և վերադարձի դեպքում ուսումնասիրության արդյունքների մասին> արձանագրությամբ:

Նշված փաստը հաստատվում է նաև Շենգավիթի <Տ-ի պետի կողմից ստորագրված և կնիքված, 1996թ.-ին Ընկերությանը տրամադրած <Տույժերից ազատման հաշվարկ> փաստաթղթով:

Այսպիսով, խոսքը գնում է պարզ մաթեմատիկական հաշվարկների մասին: Վիճարկվող ուսումնասիրության արձանագրությամբ հարկային տեսուչների կողմից պետք է ընդամենը պարզվեր, թե 19.549.400 դրամ արձանագրված գերավճարի գումարից, որքան գումար է հաշվանցվել և որքան գումար է վերադարձվել: Ըստ այդմ, Ընկերության պատճառաբանությունը կայանում է հետևյալում.

19.549.400 դրամ գերավճարի գումարից, Ընկերության տնօրենի 11.11.1996թ.-ի գրությունը բավարարվել է մասնակի և 5.000.000 դրամը գերավճարի գումարից ուղղվել է եկամտահարկի պարտքի մարմանը: Հետագայում, Ընկերության և Շենգավիթի <Տ-ի միջև կազմվել է փոխադարձ հաշիվների ստուգման ակտ, որի համաձայն առ 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Ընկերության գերավճարի գումարի չափը կազմել է 9.993.400 դրամ, որից ԱԱՀ գծով՝ 315.800 դրամ, շահութահարկի գծով՝ 4.677.600 դրամ և եկամտահարկի գծով՝ 5.000.000 դրամ:

Հիշյալ գումարից վերադարձվել է 4.952.300 դրամ գումարը, որից 274.700 դրամ, որպես ԱԱՀ-ի գծով և 4.677.600 դրամ, որպես շահութահարկի գծով գերավճարի գումար:

Այսպիսով, գտնում ենք, որ Ընկերությանը դեռ վերադարձման են ենթակա 5.000.000 դրամ եկամտահարկի գծով և 41.100 դրամ ԱԱՀ-ի գծով, ընդհանուր առմամբ 5.041.100 դրամ գերավճարի գումարը:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետով և 72-րդ հոդվածով, Ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի <Տ-ի 07.08.2012թ.-ի ուսումնասիրության արձանագրությունը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ուսումնասիրությունն իրականացրած անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Ընկերության բողոքում բերված այն պնդման կապակցությամբ, որ ուսումնասիրության արձանագրությունում արտացոլված արտահայտությունը՝ <Ընկերության կողմից սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթեր չներկայացվեցին>, անհիմն է, նշվեց հետևյալը:

Ուսումնասիրության ընթացքում՝ 01.08.2012թ.-ին ընկերության տնօրեն Ա.Սարգսյանը ուսումնասիրությունն իրականացնող անձանց տվել է գրավոր հայտարարություն, որում մասնավորապես հայտնել է, որ 01.10.2003 թ.-ից առ այսօր ընկերությունը չի աշխատում և որևէ հաշվապահական հաշվառման փաստաթղթեր գոյություն չունեն:

Հարկ է նշել, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

ՀՀ վարչական դատարանը քննության առնելով վարչական գործն ըստ հայցի <Հարավներգովերանորոգում հատուկ մասնագիտացված արտադրական ձեռնարկություն> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի <Տ՝ 5.041.000 դրամ վերադարձնել պարտավորեցնելու պահանջի մասին, 05.04.2011թ.-ի թիվ ՎԴ-2890/05/09 վճռով հայցը մերժել է:

Ընկերության կողմից վերագրյալ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.07.2011թ.-ի ՎԴ-2890/05/09 որոշմամբ մերժվել է:

28.09.2011թ.-ին ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է որոշում՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.07.2011թ.-ի ՎԴ-2890/05/09 որոշման դեմ ընկերության ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հիմնավորվել է ընկերության մոտ 5.041.100 դրամ գերավճարի բացակայության հանգամանքը, ընկերության բողոքով բերված պահանջը՝ ուսումնասիրության արձանագրությունը վերացնելու վերաբերյալ, հիմնավոր չէ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ուսումնասիրության արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ